# Թուրք-ադրբեջանական հակահայկական քաղաքականությունը

### գ. Պայքարը Լեռնային Ղարաբաղում

Ռուսական կայսրությունում 1917 թ. փետրվարյան հեղափոխության հաղթանակի շնորհիվ կտրուկ ակտիվացավ նաև կովկասահայ քաղաքական կյանքը: Ինչպես ամենուր, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում կազմավորվում էին ժամանակավոր կառավարության մարմիններ՝ ի դեմս հասարակական կազմակերպությունների գործադիր կոմիտեների:

1917 թ. մարտի 11-ին Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանի նախաձեռնությամբ քաղաքի Ղազանչեցոց եկեղեցում հրավիրվեց ժողով, որը քննարկեց գավառի գործադիր մարմին ընտրելու հարցը: Հաջորդ օրը՝ մարտի 12-ին, գաղտնի քվեարկությամբ, որին մասնակցեցին բնակչության բոլոր խավերը, ընտրվեց 40 հոգուց կազմված տեղական իշխանության մարմինը՝ գործադիր կոմիտեն: Մինչ այդ Շուշիում ստեղծվել էր բանվորական ներկայացուցիչների խորհուրդ, որին շուտով միացան նորաստեղծ զինվորական ու գյուղացիական համանուն խորհուրդները: Հիշյալ խորհուրդները հեղափոխական ժողովրդավարական իշխանության մարմիններ էին և գտնվում էին սոցիալ-դեմոկրատների ազդեցության ներքո:

Փաստորեն ցարական ինքնակալության տապալումից հետո Լեռնային Ղարաբաղն իրեն դուրս էր դրել Ելիզավետպոլի նահանգի կազմից (նրա կազմում էր 1868 թ.) և դարձել հայկական առանձին ինքնուրույն իշխանություն:

Հոկտեմբերյան հեղաշրջումը, սակայն, նոր ընթացք տվեց դեպքերի զարգացմանը, փոխեց քաղաքական իրադրությունը: Քաղաքական անկայուն վիճակը, անիշխանությունը, տնտեսական անկումը, բնակչության կենսամակարդակի կտրուկ վատթարացումը, թուրք-ադրբեջանական հակահայկական գործունեության սաստկացումը հայ ժողովրդի համար չափազանց ծանր պայմաններ էին ստեղծել:

Հենվելով տեղական փոքրաթիվ մուսուլմանական բնակչության վրա՝ մուսուլմանների ազգային խորհուրդը, հակառակ բացարձակ մեծամասնություն կազմող հայ բնակչության[457] ձգտումներին, փորձում էր իր ազդեցությունը տարածել Արցախի վրա այն դեպքում, երբ տարածաշրջանի բոլոր հայկական գավառները «ենթարկվում էին բացառապես Հայոց ազգային խորհրդին»[458]:

Թուրք-թաթարների հակահայկական գործունեության պատճառով գավառը հայտնվել էր մեկուսացման մեջ և ամբողջովին կտրվել դրսի աշխարհի հետ հաղորդակցվելու ճանապարհներից: Ազգամիջյան կռիվները, ահագնացող սովն ու համաճարակային հիվանդությունները մարդկային հազարավոր կյանքեր էին խլում:

1917 թ. նոյեմբեր-դեկտեմբերի դրությամբ Լեռնային Ղարաբաղում գրեթե իշխանություն չկար: Գոյություն ունեցող միակ տեղական մարմինը՝ 72 հոգուց կազմված գործադիր կոմիտեն, ըստ էության, անգործության էր մատնված:

Նոյեմբերին գավառի նախկին կոմիսար Լ. Վարդապետյանի նախաձեռնությամբ հրավիրվեց խորհրդակցություն, որին մասնակցեցին հասարակական և քաղաքական մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչներ: Խորհրդակցությունն իր կազմից ընտրեց 14 հոգուց բաղկացած տեղական իշխանության ժամանակավոր մարմին՝ «Հայ հեղափոխական կուսակցությունների ու կազմակերպությունների Ղարաբաղի ժամանակավոր խորհուրդ» (հետագայում կոչվեց միջկուսակցական բյուրո): Խորհրդի գործունեությունը սահմանափակվում էր միայն Շուշի քաղաքի շրջանակներում՝ բացառելով Դիզակի, Խաչենի, Վարանդայի և Ջրաբերդի գավառները:

Ազգային կոմիտե էր ստեղծել նաև Շուշի քաղաքի մուսուլման բնակչությունը, որը վարում էր ազգակիցների գործերը:

Շուտով Արցախում իրադարձություններն այնպիսի ընթացք ստացան, որ միջկուսակցական բյուրոյի վերակազմության անհրաժեշտություն զգացվեց: Անիշխանությունն առկա էր բոլոր բնագավառներում: Տնտեսական ճգնաժամն աննախադեպ չափերի էր հասել, քաղաքական կրքերն ու ազգամիջյան հակամարտությունները երկու ժողովուրդներին մղում էին փոխադարձ վրիժառության և անխոհեմ քայլերի: Մուսավաթականները, օգտվելով ստեղծված իրավիճակից, ուժեղացնում էին տեղի մահմեդականների լրտեսական ու քայքայիչ գործունեությունը: Այդ ամենին գործադիր կոմիտեն չէր կարողանում համարժեք քայլերով հակազդել: Այնուամենայնիվ, այդ իրավիճակում գավառի հայ և մուսուլման ժողովուրդների քաղաքական ուժերը կամք դրսևորեցին համատեղ ջանքերով փակուղին ճեղքելու համար:

1917 թ. դեկտեմբերի 20-ին միջկուսակցական բյուրոյի և մուսուլմանների ազգային կոմիտեի ճնշման տակ գործադիր կոմիտեն հրաժարական տվեց: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ ստեղծվեց նոր մարմին՝ ազգամիջյան կոմիտե:

Այն պահին, երբ ռուս զինվորները լքել էին Կովկասյան ճակատը, երբ թուրքերը հասել էին Երևանի մատույցներին, Թիֆլիսում վրացի և մուսուլման ազգայնականների ջանքերով, ինչպես արդեն նշվել է, լուծարվեց Անդրկովկասի դաշնությունը: Փլուզվեց երկրամասի քաղաքական ու տնտեսական միասնությունը:

Անդրկովկասում անկախ պետությունների կազմավորման ու գոյության ամբողջ շրջանում նրանց միջև հարաբերություններն ունեին լարված բնույթ՝ պայմանավորված տարածքային վեճերով: Առաջին հերթին դա վերաբերում է հայ-ադրբեջանական հարաբերություններին: Անկախ պետության կարգավիճակում հայտնվելուն պես «վիճելի» տարածքներին տիրանալու Ադրբեջանի ձգտումը դարձավ պետական քաղաքականության հիմնաքար:

Պահն իրեն ուշացնել չտվեց: Դեպի Գանձակ էր շտապում թուրքական բանակը: Ընդ որում՝ թուրքական կանոնավոր զորամասերի փոխադրումը Թավրիզով դեպի Ղազախ և Գանձակ սկսվել էր դեռևս 1918 թ. մայիսի սկզբներից: Մայիսի 25-ին նրանց առաջապահ ջոկատները մտան Գանձակ: Շուտով Գանձակ մտավ նաև Ղազախ-Աղստաֆա ուղղությամբ շարժվող թուրքական զորքը:

Ադրբեջանական Հանրապետության մայրաքաղաք Գանձակում վերակազմավորված թաթարական զորամասերն ու թուրքական զորքերը միավորվեցին՝ ստեղծելով, այսպես կոչված, «Կովկասի իսլամական բանակ», որի ընդհանուր հրամանատարությունը ստանձնեց Նուրի փաշան: Իսլամական բանակի հրամանատարությունը հեռահար նպատակներ ուներ՝ Բաքուն գրավելուց հետո անմիջապես նվաճել Լեռնային Ղարաբաղը, որի ինքնուրույնությունը խանգարում էր համաթյուրքականության ծրագրերին: «Գյանջայի նահանգում՝ Կուրից հարավ, հայերն իրենց հանգիստ են պահում,- նշել է Նուրի փաշան:- Որպեսզի ինձ ապահովեմ Ղարաբաղի հայերից, Ջուլֆայով և Օրդուբադով այնտեղ կուղարկվի ոչ մեծ ջոկատ, իհարկե, Բաքուն գրավելուց հետո միայն»:

Թուրք-թաթարական (իսլամական) բանակն, ինչպես նշվել է, ընդհանուր ճակատով հարձակում սկսեց Բաքվի վրա: Այնուհետև Ադրբեջանի կառավարությունն ու իսլամական բանակի հրամանատարությունը նախապատրաստվեցին դեպի Լեռնային Ղարաբաղ արշավանքին: Նրանց դրդմամբ ակտիվացան Արցախի մուսուլմանական բնակավայրերում դեռևս մայիսին թուրք սպաներից նշանակված զինվորական պարետները, որոնք «կատաղի համախսլամական և պանթուրքական քարոզ էին կազմակերպում մահմեդականների շրջանում»:

1918 թ. հունիսի 19-ին ինքնալուծարման ենթարկվեց միջկուսակցական բյուրոն: Մինչ այդ՝ հունիսին, մուսուլմանական ազգային կոմիտեն դադարեցրել էր իր գործունեությունը՝ տեղը զիջելով զինվորական պարետներին:

Միջկուսակցական բյուրոյի փոխարեն ստեղծվեց նոր մարմին՝ Ղարաբաղի հայ ժողովրդական կառավարություն կամ կոմիսարների խորհուրդ: Կոմիսարների խորհուրդը

457 1917 թ. դրությամբ Լեռնային Ղարաբաղի բնակչության կազմն այսպիսին էր. հայեր՝ 150 հազար (70 տոկոս) մուսուլմաններ՝ 58 հազար (27 տոկոս), այլ ազգեր՝ 5 հազար (3 տոկոս), (տես ՅԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 128, թ. 249):

458 Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը. – Հայրենիք, 1928, թիվ 6 (ապրիլ), էջ 89:

*և նրա նորանշանակ գլխավոր լիազորները զգալի աշխատանք կատարեցին բնակչության մեջ՝ գավառի գյուղացիությանն առաջիկա համագումարին նախապատրաստելու ուղղությամբ: 1918 թ. հուլիսի 22–ից 26–ը Շուշիում տեղի ունեցավ առաջին համագումարը, որը Լեռնային Ղարաբաղը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր, լուծարեց հեղափոխական ուժերի ստեղծած ազգային ճակատի ժամանակավոր կառավարությունը և կազմեց 7 հոգուց բաղկացած (ներկայացնում էին Ղարաբաղի գրեթե բոլոր քաղաքական ուժերին) նոր ղեկավար մարմին՝ Ղարաբաղի ժողովրդական կառավարություն: Վերջինիս իշխանությունը տարածվում էր ինչպես Շուշի քաղաքի, այնպես էլ ամբողջ գավառի վրա:*

*Ժողովրդի կողմից ընտրված օրինական կառավարության ստեղծմամբ Ղարաբաղում ներքին կյանքը սկսեց աստիճանաբար մտնել բնականոն հունի մեջ: Թվում էր՝ գտնվել է իրավիճակը կարգավորելու և հայ–ադրբեջանական հակամարտությունը մեղմացնելու խաղաղ ելքը:*

*Գավառը բնականոն կյանքին վերադարձնելու ժողովրդական կառավարության գործադրած ջանքերը, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, «սկսեցին տհաճություն պատճառել թուրքերին»*[459]*:*

*Թուրք–թաթարների կողմից Ղարաբաղի հայությանը սպառնացող վտանգը կանխելու նպատակով Հայաստանի կառավարությունը փորձեց խաղաղ ճանապարհով լուծել գավառում կուտակված սոցիալական ու ազգային խնդիրները: 1918 թ. օգոստոսի 20–ին Հայաստանի կառավարության հրահանգով Վրաստանում նրա գործերի հավատարմատար Ա. Ջամալյանը գրավոր դիմում ներկայացրեց Ադրբեջանի իր պաշտոնակից Մ. Ջաֆարովին՝ առաջարկելով հայերից և ադրբեջանցիներից կազմված պատվիրակություն ուղարկել Ղարաբաղ՝ ծագած խնդիրները լուծելու առաքելությամբ: Ադրբեջանի կառավարությունը պաշտոնական գրությամբ պահանջեց, որ իրեն արտոնվի Հայաստանի մուսուլման ազգաբնակչության վրա ազդեցություն ունենալու իրավունք*[460]*: Փաստորեն Ադրբեջանի կառավարությունը Ղարաբաղի հիմնահարցի քննությունը ցանկանում էր տանել այն ուղղությամբ, որը հնարավորություն կտար մի կողմից՝ արտաքուստ ցույց տալու, թե ինքը դեմ չէ խնդրի խաղաղ լուծմանը, բայց, ըստ էության, գավառին զրկելու Հայաստանի Հանրապետության զորակցությունից, իսկ մյուս կողմից՝ Հայաստանաբնակ մուսուլման բնակչությանը ներգրավելու իր զավթողական ծրագրերում: Դա փոխհամաձայնեցված մոտեցում էր, որ Ադրբեջանը ձեռք էր բերել թուրքական բանակի հրամանատարության հետ: Վերախմբավորելով խալամական բանակի ուժերը, ինչպես նաև հավաքագրելով քրիստոնյա ժողովուրդների դեմ «սրբազան» պատերազմ սկսելու մոլուցքով լցված մահմեդականներին՝ Նուրի փաշան շտապեց դեպի Արցախ: Նա նախ որոշեց համոզել Լեռնային Ղարաբաղի ժողովրդին կամովին ընդունել Ադրբեջանի հպատակությունը: Գանձակաբնակ հայերից (Գանձակի քաղաքագլուխ Խ. Համասփյուռ, Կ. Մելիք–Շահնազարով) և թաթարներից կազմված պատվիրակություն գործուղվեց Շուշի՝ արցախցիներին ներկայացնելու Նուրի փաշայի վերջնագիրը*[461]*:*

*Մուսավաթականներին և նրանց զինակից օսմանցիներին շատ բան պետք չէր համոզվելու համար, որ Ղարաբաղի բնակչությունն «անուղղելի» է Ադրբեջանի տիրապետությունն ընդունելու հարցում և ցանկանում է միանալ Հայաստանի Հանրապետությանը: Ահա թե ինչու նրանք անցան բիրտ ուժի գործադրմանը: Հայ բնակչության հետ ուժի*

459 Տե՛ս Մշակ, 23 փետրվարի, 1919:

460 Տե՛ս Նոր հորիզոն, 29 օգոստոսի, 1918:

461 Տե՛ս Нагорный Карабах в 1918–1923 гг. Сборник документов и материалов, отв. ред. Микаелян В.А., Ереван, 1992, док. 12, էջ 19–20:



*գիրքերից խոսելու քաղաքականությունը շարունակվեց նոր դրսևորումներով, սաստկացան բռնություններն ու ազգամիջյան կռիվները:*

*Սեպտեմբերի 6–ից 13–ը Շուշիում տեղի ունեցավ արցախահայության երկրորդ համագումարը: Այդ օրերին թուրք զորահրամանատար Ջեմիլ Ջահիդ բեյից երկու վերջնագիր նամակ ստացվեց, մեկն՝ ուղղված Ղարաբաղի հայոց հոգևոր առաջնորդին, մյուսը՝ գավառի հայությանը: Պահանջվում էր երեք օրվա ընթացքում զենքերը հանձնել թուրքական բանակի հրամանատարությանը և անձնատուր լինել*[462]*: Համագումարն իր երեք նիստերում քննարկեց վերոհիշյալ վերջնագիրը և կայացրեց հետևյալ որոշումները. ա) մերժել ադրբեջանական գերիշխանությունը, բ) պատգամավորություն ուղարկել Աղդամ՝ խալամական բանակի հրամանատարության հետ առերես բանախոսելու համար: Համագումարը սեպտեմբերի 11–ի նիստում Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը վերանվանեց Ղարաբաղի հայոց ժողովրդական խորհուրդ: Անվանափոխումը թելադրված էր առկա լարված իրադրությամբ և միտում ուներ մեղմելու Ադրբեջանի ղեկավարության գայրույթն ինքնիշխան գավառի նկատմամբ: Ղարաբաղի հայոց ժողովրդական խորհուրդը, կատարելով համագումարի որոշումը, սեպտեմբերի 15–ին Աղդամ գործուղեց հինգ հոգուց կազմված պատվիրակություն՝ Գ. Մելիք–Շահնազարյանի գլխավորությամբ: Նույն օրը նրանք հանդիպեցին Ջեմիլ Ջահիդ բեյի հետ: Վերջինս ներկայացրեց նույն պահանջը՝ հպատակվել Ադրբեջանի կառավարությանը: Զարգուշակ լուրը Շուշի հասցրին Հ. Մուսայելյանն ու Դ. Առաքելյանը: Մյուս պատվիրակներին, որպես պատանդ, նետել էին բանտ*[463]*: Անհրաժեշտ էր հրավիրել նոր համագումար:*

*1918 թ. սեպտեմբերի 17–ից 22–ը տեղի ունեցավ Ղարաբաղի հայության 3–րդ համագումարը: Մինչ համագումարը զբաղված էր գավառի ներքաղաքական և սոցիալ–տնտեսական հարցերի քննարկումով, սեպտեմբերի 19–ին Գանձակից Աղդամ ժամանեց Նուրի փաշան և Ղարաբաղի հայ բնակչությանը, ի դեմս նրա երրորդ համագումարի, գրավոր առաջարկեց զինաթափվել և ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Սեպտեմբերի 20–ի նիստում բուռն քննարկումներից հետո համագումարը կայացրեց իրատեսական որոշում. «Անհրաժեշտ է թուրքերի հետ լեզու գտնել, խուսափել պատերազմից՝ հաշվի առնելով Ղարաբաղի մեկուսացված վիճակը, նրա տնտեսական ծանր պայմանները և զինամթերքի ու հանդերձանքի սակավությունը»*[464]*:*

*Որոշումը Նուրի փաշային փոխանցելու համար Աղդամ մեկնեց նոր պատվիրակություն, որը տեղ հասավ սեպտեմբերի 21–ին, երբ արդեն լրացել էր վերջնագրի պատասխան տալու ժամկետը: Սեպտեմբերի 22–ին թուրք ասկյարներն ու ադրբեջանական զորքերը ներխուժեցին Լեռնային Ղարաբաղ և լայնածավալ մարտական գործողություններ ծավալեցին Դաշբուլից (Քարագլուխ) մինչև Միրուշենլի: Նրանք սեպտեմբերի 22–ից 23–ը գրավեցին ու թալանեցին Միրշալու, Դահրազ, Վարազաբուն, Փրջամալ, Խանաբադ, Քարագլուխ, Խրամորթ գյուղերը և սրի քաշեցին բնակչության մի մասին: Սեպտեմբերի 24–ին հակառակորդը մտավ Շուշի: Քաղաքի իշխանություններին ու հայ բնակչությանը դաժան փորձություններ էին սպասվում: Ցրվեց Ղարաբաղի կառավարությունը: Անիշխանության մատնված բնակչությանը զինաթափելուց հետո նվաճողները սկսեցին կողոպտել նրանց տները, խանութները և կոտորել մարդկանց:*

*Թեև Շուշին ընկել էր, սակայն կանգուն էին մյուս գավառները՝ Ջիվանշիրը, Ջրաբերդը, Դիզակը և Վարանդան: Դեռևս թուրքերի հարձակման նախօրյակին այդ շրջանների զինված կազմավորումները համախմբվել էին Սոկրատ բեկ Մելիք–Շահնազարյա-*

462 Տե՛ս Մշակ, 22 փետրվարի, 1919:

463 Տե՛ս Յարությունյան Յ.Մ., Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ., Երևան, 1996, էջ 50–53:

464 Նույն տեղում, էջ 55:

նի, Ալեքսան դայու, Արտեմ Ղալազարյանի, Բագրատ Նազարյանի հրամանատարության տակ և որոշել կռվել մինչև արյան վերջին կաթիլը, չզինաթափվել ու անձնատուր չլինել: Այդ գաղափարը համակել էր Արցախի հայ հասարակայնությանն ընդհանրապես:

Արցախի պաշտպանությունն ինքնության հաստատում էր, սեփական ուժերի փորձարկում ամենածանր, անհույս պահի մեջ անգամ: Գավառի նորակազմ զորաջոկատներից սեփական ուժերի առաջին քննությունը հանձնեցին Ջիվանշիրի գավառի բնակչությունից կազմավորված փոքրաթիվ ու թույլ զինված ջոկատները: Այն օրերին, երբ թուրքերը շարժվում էին դեպի Շուշի, նրանք կարողացան ջարդել և դուրս շպրտել իրենց հողը ներխուժած թշնամուն: Վերջինս Ջիվանշիրի վրա նոր հարձակում կատարեց Շուշիի անկումից հետո: Մահմեդական զորաջոկատները Շուշիից մտնում են Ջիվանշիրի գավառ և շարժվում դեպի Մարտակերտ գյուղը: Մարտակերտի և Լուլասազի մատույցներում հակառակորդը, ծանր կորուստներ տալով, խուճապահար նահանջում է:

Քննություն հանձնելու հերթը Վարանդայինն էր: Թուրքական բանակի հրամանատարությունը վերջնագիր է ներկայացնում Վարանդայի զորահրամանատար Ս. բեկ Մելիք–Շահնազարյանին՝ պահանջելով հանձնել գավառը, որը, սակայն, մերժվեց բնակչության կողմից: Հակառակորդը չհապաղեց օգտվել Լեռնային Ղարաբաղի համար ստեղծված բարդ ռազմաքաղաքական իրադրությունից և Շուշիից շարժվեց դեպի Վարանդա ու Դիզակ: Շուշիքենդ, Տոնավարդ և Խաչմաչ գյուղերի փոքրաթիվ և վատ զինված ջոկատները չկարողացան կանգնեցնել թվաքանակով շատ անգամ գերազանցող և լավ զինված թշնամուն: Հոկտեմբերի 17–ին թուրք–ադրբեջանական զինյալները հասան Մամնա գյուղ: Զենք կրելու ընդունակ բնակչությունը ոտքի կանգնեց: Ամենուր կազմակերպվեցին աշխարհազորային ջոկատներ: Հայկական զորամասերը փակեցին թշնամու նահանջի բոլոր ճանապարհները: Թշնամին հոկտեմբերի 18–ի լուսաբացը դիմավորեց շրջապատման մեջ, որից դուրս պրծնելու նրա բոլոր ջանքերն ապարդյուն անցան: Կռիվը տևեց մեկ ամբողջ օր: Հոկտեմբերի 19–ին թշնամին, մեծ կորուստներ տալով, նահանջեց դեպի անտառ և գիշերով հասավ Շուշի[465]:

Այսպիսով՝ դրսից, մասնավորապես Հայաստանի Հանրապետությունից որևէ օգնություն չստանալով՝ Արցախի հերոս ժողովուրդն անտրտունջ ու աներկյուղ մինչև վերջ տարավ իր կռիվը թուրք–ադրբեջանական կանոնավոր զորքերի ու տեղական մուսուլմանական ավազակախմբերի դեմ, պաշտպանեց իր ազատությունն ու անկախությունը մինչև բրիտանացիների հայտնվելը:

Մուդրոսի զինադադարի համաձայն՝ տարածաշրջանից թուրքական զորքերի հեռանալուց հետո Լեռնային Ղարաբաղում վիճակը, ըստ էության, չփոխվեց, քանի որ մուսուլմանական շրջանակներից բխող վտանգն ամենևին չվերացավ:

Մեծ Բրիտանիայի կառավարության 1918 թ. դեկտեմբերի 11–ի որոշմամբ անգլիական զորամասերը Կովկասում ապահովելու էին թուրքերի կողմից Մուդրոսի զինադադարի պայմանների կատարումը: Բրիտանացիները ծրագրում էին ոչ միայն նվաճել «ողջ Անդրկովկասը Դաղստանի հետ միասին, այլև վերահսկողություն սահմանել երկրամասի ամբողջ տնտեսական ու քաղաքական կյանքի վրա»[466], որպեսզի կարողանային չեզոքացնել տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը:

Այդ նպատակն իրականացնելու գործում Անգլիան առանձնապես կարևորում էր Ադրբեջանի դերը, քանի որ վերջինս տարածաշրջանում առանձնանում էր իր հակահեղափոխական ու հակառուսական ընդգծված գործելակերպով, ինչը համահունչ էր անգ-

[465] Տե՛ս Արև, 21 փետրվարի, 1919:

[466] Գալոյան Գ. Ա., Պատմության քառուղիներում, Երևան, 1982, էջ 251:



լիացիների աշխարհաքաղաքական շահերին: Բացահայտ թուրքամետ քաղաքականությունը մուսավաթականներին չէր խանգարում անգլիացիների հետ համագործակցելու եզրեր գտնել «վիճելի» տարածքները նվաճելու հարցում: 1918 թ. նոյեմբերի սկզբներին հինգ հոգուց կազմված բրիտանական ներկայացուցչությունը մայոր Գիբբոնի գլխավորությամբ այցելեց Շուշի: Մայորը Բաքվում դաշնակից զորքերի հրամանատար գեներալ Վ. Թոմսոնի անունից տեղեկացրեց, որ ներկայացուցչությունը կոչված է կարգ ու կանոն հաստատելու գավառում, իսկ քաղաքական ու տարածքային խնդիրները չէին վերաբերում ներկայացուցչությանը, քանի որ դրանք պետք է լուծվեին Փարիզի վեհաժողովում[467]:

1919 թ. հունվարի 15–ին Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի նախագահը նամակով տեղեկացրել է Բաքվի Հայոց ազգային խորհրդին, թե անգլիական ներկայացուցչության ժամանելուց հետո, ամբողջ հույսը դնելով նրա վրա, դիմել են խաղաղ կյանքի՝ հաստատ համոզված լինելով, որ իրենց կյանքի դեմ ոչ մի դավ չի նյութվի: Բայց դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ նամակի հեղինակը չէր սխալվել՝ կանխատեսելով, որ այդպես վարվելով՝ իրենք չարաչար կպատժվեն ու հիմնահատակ կկործանվեն[468]: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքականությանը, ապա նրա կառավարությունը, առաջնորդվելով դաշնակից երկրների բարձրագույն հրամանատարության խորհուրդներով, այն է՝ վիճելի տարածքին ուժի միջոցով տիրանալը, լրջորեն կվնասի նախահարձակվողի պահանջներին, և պետք է սպասել խաղաղության վեհաժողովի վճռին, շարունակում էր չարդարացված զգուշավորություն ու սպասողականություն ցուցաբերել, ինչի հետևանքով հետագայում թանկ վճարեցին և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Լեռնային Ղարաբաղը:

Բայց և այնպես արցախահայությունն ու նրա քաղաքական ուժերը ժամանակին կռահեցին անգլիացիների հակահայկական քաղաքականության էությունը և համոզվեցին, որ նրանց խոստումներին հավատալը սխալ է, իսկ նրանց հետ հույսեր կապելը՝ կործանարար: Նման պայմաններում արցախահայությանը մնում էր ապավինել սեփական ուժերին: Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը և ՀՅԴ Ապառաժի (Ղարաբաղ) կոմիտեն գործնական քայլեր կատարեցին երկրամասի ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ, ինչն անհրաժեշտ էր ադրբեջանական զորքերի ներխուժման նախօրյակին:

Շատ չանցած՝ մուսավաթականների կառավարությունը սկսեց մեծ թվաքանակով զինվորական ուժեր ուղարկել Լեռնային Ղարաբաղ և նրանց տեղակայել ռազմավարական նշանակության վայրերում: Այդ կապակցությամբ հայկական կողմի արդարացի բողոքներին բրիտանական ներկայացուցչությունը մշտապես պատասխանում էր, թե դա Ադրբեջան է, և թուրքերն իրավունք ունեն կատարելու զորաշարժեր, կամ էլ թե իրենք անզոր են նման հարցեր վճռելու[469]: Ի պատասխան նման մոտեցմանը, որը հակասում էր անգլիացիների միջնորդական առաքելության սկզբունքին, 1918 թ. դեկտեմբերի վերջին Ղարաբաղի չորս շրջանների զորահրամանատարները գրավոր բողոք ներկայացրին Շուշիի անգլիական ներկայացուցչությանը, որում նշվում էր, թե անգլիացիները, ասես, այդտեղ են եկել հայ ժողովրդին զսպելու և նրան Ադրբեջանին հպատակ դարձնելու նպատակով[470]:

Շատ չուտով այդ կանխատեսումը դարձավ իրողություն: 1919 թ. հունվարի 15–ին Ղարաբաղում անգլիական հովանավորության ներքո ստեղծվեց գեներալ–նահանգապետ-

[467] Տե՛ս Մշակ, 2 մարտի, 1919:

[468] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 74, թ. 45:

[469] Տե՛ս նույն տեղում, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 1–2:

[470] Տե՛ս նույն տեղում, գ. 38, թ. 27:

տություն՝ Խոսրով բեկ Սուլթանովի ղեկավարությամբ: Հարցի այս կերպ լուծումից դժգոհ մնացին և՛ Հայաստանի Հանրապետությունում, և՛ Ղարաբաղում: Հայաստանի կառավարությունը բողոք հայտնեց Ադրբեջանի կառավարությանը՝ Հայաստանի տարածքային իրավունքները խախտելու համար և պահանջեց ետ քաշել զորքերը Ղարաբաղից[471]: Խոսրով բեկ Սուլթանովի կողմից նահանգապետությունն ընդունելու փաստի մասին Շուշիում բրիտանական զինվորական ներկայացուցչության ղեկավար Մոնկ Մեսոնի գրությանը Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը պատասխանեց, որ Ղարաբաղը չի ճանաչել և չի ճանաչում իր սահմաններում Ադրբեջանի կառավարության իշխանությունը[472]:

Արցախահայությունը հարկադրված էր իր գործերը վարել սեփական իշխանությամբ: Իսկ Ասկերանում, Խանքենդում, Ջաբուղում և Շուշի քաղաքի մուսուլմանական մասում թշնամու տեղակայված մի քանի հազարի հասնող լավ զինված ամբոխը բերվել էր մարտական պատրաստության և սպասում էր հարձակման հրամանի:

Արտաքին աշխարհից որևէ օժանդակություն ստանալու հույսը կորած՝ գավառը նոր ավերածություններից զերծ պահելու համար Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը փորձում էր փոխադարձ զիջումների միջոցով, բայց ոչ Ադրբեջանի կազմի մեջ մտնելով, հիմնահարցը լուծել խաղաղ ճանապարհով:

Արցախահայությունն ակտիվացնում է շփումները անգլիական հրամանատարության հետ: 1919 թ. մարտի 26-ին՝ Բաքվում գնդապետ Դ. Շատելվորթի հետ հանդիպման ժամանակ, Ղարաբաղի պատվիրակներ՝ Շուշիի քաղաքագլուխ Գ. Մելիք-Շահնազարյանը և Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանը մեկ անգամ ևս համոզվում են, որ անգլիացիներն ադրբեջանամետության խնդրում անզիջում են: Դա հաստատվում է նաև Ղարաբաղի հայության 5-րդ համագումարում (1919 թ. ապրիլի 23-ից 29-ը), երբ գնդապետ Դ. Շատելվորթը «Ղարաբաղի ժամանակավոր իշխանության վարչական ծրագիրը» զեկուցման մեջ ջանում էր ապացուցել, որ գեներալ-նահանգապետությունը մտցվել է՝ գլխավորապես հայ ժողովրդի շահերը հաշվի առնելով: Եվ դա այն դեպքում, երբ համագումարն արդեն հնչեցրել էր, որ Ադրբեջանի հետ որևէ կապ ունեցող ցանկացած վարչական ծրագրի իրականացումն անխուսափելի պատճառ է ազգամիջյան լուրջ ընդհարումների ու արյունահեղության[473]:

Գավառում ռազմաքաղաքական իրադրությունը կտրուկ սրվեց մայիսի վերջին: Մայիսի 20-ից Խ. բեկ Սուլթանովի կարգադրությամբ հայերի առջև փակվեցին արտաքին աշխարհի հետ կապող բոլոր ճանապարհները: Տնտեսական բոյկոտը ղարաբաղցիներին ստիպեց ձեռնամուխ լինել քոչվորների՝ սար տանող ճանապարհը փակելուն: Բայց Հայոց ազգային խորհուրդը հայ-ադրբեջանական հակամարտությունը մեղմելու շահախնդրությամբ չգնաց այդ քայլին: Դա չխանգարեց մուսավաթականներին, որ հունիսի առաջին օրերին հայ բնակչության զանգվածային կոտորածներ կազմակերպեն Շուշի քաղաքում և նրա շրջակա Ղայբալիշեն, Կրկժան, Փահլուլ և Ջամիլու գյուղերում: Հունիսյան կոտորածների ժամանակ, ոչ լրիվ տվյալներով, Ղարաբաղում զոհվել է ավելի քան 700 մարդ[474]:

Անդրկովկասի բնակավայրերում տեղի էին ունենում հայության բողոքի ցույցեր: Հունիսի 22-ին Թիֆլիսում 30 հազարից ավելի ցուցարարների կողմից ընդունվում է բողոքի դիմում՝ ուղղված դաշնակից երկրների կառավարություններին՝ պահանջելով դատի տալ կոտորածի կազմակերպիչներին, Ղարաբաղից անհապաղ հեռացնել Ադրբեջանի իշխանությանը, որին չի ճանաչել և չի ճանաչում Հայկական Ղարաբաղը, և այն միացնել

[471] Տե՛ս Нагорный Карабах в 1918–1923 гг., док. 40, էջ 64:

[472] Տե՛ս նույն տեղում, փաստ. 59, էջ 93:

[473] Տե՛ս նույն տեղում, փաստ. 105, էջ 164:

[474] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, թ. 387, գ. 76, թ. 12:



մայր երկրին՝ Հայաստանի Հանրապետությանը[475]: Բողոքի ձայն հնչեցրեց նաև Հայաստանի կառավարությունը՝ մեկ անգամ ևս փաստելով, որ ինքը չի ճանաչում Խ. բեկ Սուլթանովի գեներալ-նահանգապետությունը Հայկական Ղարաբաղի սահմաններում[476]:

Հայաստանի կառավարության, ինչպես և կովկասահայության բոլոր բողոքները մնացին որպես «ձայն բարբառոյ յանապատի»: Անդրկովկասում բրիտանական բարձր հրամանատարությունը հունիսյան դեպքերի առնչությամբ բավարարվեց՝ միայն Ղարաբաղ քննիչ հանձնաժողով ուղարկելով ու կատարվածը խոսքով դատապարտելով:

Փոխզիջումային համաձայնագիր կայացնելու ամբողջ ծանրությունն ու պատասխանատվությունն ընկան Ղարաբաղի հայության 7-րդ համագումարի (օգոստոսի 12-ից 22-ը) վրա: Օգոստոսի 22-ին համագումարի կողմից ընտրված 16 հոգուց կազմված պատվիրակությունը Խ. բեկ Սուլթանովի հետ քննարկեց և ստորագրեց 26 կետից բաղկացած ժամանակավոր համաձայնագիր, ըստ որի՝ Լեռնային Ղարաբաղը ժամանակավորապես՝ մինչև Փարիզի վեհաժողովի կողմից հարցի վերջնական լուծումը, ընդունում է Ադրբեջանի իշխանությունը՝ պայմանով, սակայն, որ վերջինս չի միջամտի գավառի ներքին գործերին[477]:

Դա բավարարում էր Ադրբեջանին՝ լուծված համարելու Արցախի հարցը, իսկ Հայաստանի կառավարությունը դա գնահատեց որպես հայության ազգատարածքային շահերի դեմ ուղղված գործարք և պաշտոնական բողոք հղեց Փարիզի վեհաժողովին ու գեներալ Վ. Թոմսոնին՝ նշելով, որ բացի հայկական տիրապետությունից, Ղարաբաղին մեկ այլ տիրապետություն պարտադրելը նշանակում է «հակառակվել ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքներին», և ընդգծում, որ «Ղարաբաղը եղել է և կմնա որպես Հայաստանի անբաժանելի մաս»[478]:

Հայկական Ղարաբաղը ժամանակավորապես իրեն «ենթարկելուց» հետո Ադրբեջանը ցանկանում էր բռնի ուժով տիրանալ նաև Զանգեզուրին: Միաժամանակ մուսավաթականների կառավարությունը չէր գլանում բարձրաձայնել, որ ինքը տարածքային վեճերի խաղաղ կարգավորման ջատագով է: Պատահական չէ, որ Հայաստանի կառավարության առաջարկած հայ-ադրբեջանական խորհրդաժողով հրավիրելու գաղափարն ընդունվեց Ադրբեջանի կառավարության կողմից: Վերջինս պատրաստվում էր արշավել Զանգեզուրի վրա՝ նպատակ ունենալով խորհրդաժողովի մասնակիցներին կանգնեցնել կատարված փաստի առաջ:

Պատերազմական իրավիճակում կարևորելով երկու հանրապետությունների միջև սահմանների հստակեցման խնդրի լուծումը՝ 1919 թ. նոյեմբերի 20-ին Թիֆլիսում Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները բանակցություններ սկսեցին: Նոյեմբերի 23-ին վարչապետներ Ա. Խատիսյանը և Ն. Ուսուբբեկովը ստորագրեցին համաձայնագիր, որով պետք է վերջ տրվեին պատերազմական գործողություններին:

Կողմերը պայմանավորվեցին միջպետական հակամարտությունները այդուհետ լուծել խաղաղ բանակցությունների միջոցով[479]: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ երկու հանրապետությունների պատվիրակները դեկտեմբերի 14-ին (նախատեսված էր նոյեմբերի 26-ին) գումարեցին խորհրդաժողով: Ադրբեջանական կողմը, խուսա-

[475] Տե՛ս Ժողովուրդ, 27 յունիսի, 1919: Հայաստանի աշխատաւոր, 26 յունիսի, 1919:

[476] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, թ. 403: Нагорный Карабах в 1918–1923 гг., док. 170, с. 206.

[477] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 9, թ. 67: Нагорный Карабах в 1918–1923 гг., док. 214, с. 323–327:

[478] ՀԱԱ, ֆ. 199, գ. 223 (մաս I), թ. 143–144: Нагорный Карабах в 1918–1923 гг., док. 217, с. 332–334.

[479] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)..., փաստ. 130, էջ 140–141:

փելով սահմանային վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու պատրաստակամությունից, հայտարարեց, թե ներկա պայմաններում անկարելի է երկու հանրապետությունների միջև այնպիսի սահմանագիծ անցկացնել, որ բավարարի երկու կողմերին էլ, և, որպես այլընտրանք, առաջարկեց ստեղծել համադաշնություն (կոնֆեդերացիա), ինչը կհեշտացներ մյուս խնդիրների լուծումը: Հայաստանի պատվիրակությունը համաձայնվեց այն պայմանով, որ աշխատանքների ավարտից ութ օր անց նորից հանդիպեն Թիֆլիսում տեղերում նախապես քննարկելով հարցը[480]: Ադրբեջանական կողմը չառարկեց: Սակայն խորհրդաժողովն այդպես էլ տեղի չունեցավ 1919 թ. վերջին և 1920 թ. սկզբին սկսված հայ-ադրբեջանական նոր կռիվների պատճառով:

1919 թ. սեպտեմբերին Ղարաբաղից (նաև ամբողջ Անդրկովկասից, բացի Բաթումից) հեռացան անգլիական զորքերը:

Ադրբեջանը չէր հաշտվում Զանգեզուրում կրած պարտության հետ, որի գլխավոր պատճառներից մեկը համարում էր Լեռնային Ղարաբաղը: Մուսավաթ պարագլուխները որոշել էին ուղղել թույլ տված «սխալը», այն է՝ վերջնականապես նվաճել Ղարաբաղը, ապահովել թիկունքը, ապա նոր միայն պատերազմել Զանգեզուրի համար: Ադրբեջանը եռանդուն կերպով նախապատրաստվում էր այդ ծրագրի իրականացմանը: Կարյագինոյի ուղղությամբ Զանգեզուրի սահմանակից շրջաններում շարունակվում էր թուրքական զորքերի կենտրոնացումը: Անընդհատ զորքեր էին տեղափոխվում նաև Զաբուղի շրջան: Զինուժ տեղակայվեց նաև Ջիվանշիրի սահմանակից շրջաններում: 1920 թ. գարնանը Ադրբեջանը կենտրոնացրել էր ավելի քան 10 հազար զինվոր: Շուշի մեկնեց Նուրի փաշան: Նոր իրադրության պայմաններում Ղարաբաղի հետագա ճակատագրի հետ առնչվող խնդիրները քննարկվեցին 8-րդ համագումարում (1920 թ. փետրվարի 28-ից մարտի 4-ը): Համագումարը խստորեն դատապարտեց Լեռնային Ղարաբաղի դեմ ուղղված Ադրբեջանի ոտնձգությունները և փաստեց, որ նման դեպքերի կրկնությունը արցախահայությանը կստիպի դիմադրել և անգամ դուրս գալ բացահայտ կռվի[481]: Մերժելով իրենց պարտադրած վերջնագիրը՝ արցախցիները դիմեցին զենքի:

1920 թ. մարտի 20-ին Խ. բեկ Սուլթանովի կարգադրությամբ ադրբեջանական բանակը և տեղի մուսուլմանական զինված կազմավորումները բռնությամբ զինաթափեցին Ղարաբաղի հայության մեծ մասին: Երկու օր անց՝ մարտի 22-ին, հակառակորդն անցավ բացահայտ հարձակման Ադրբեջանի սահմանի ամբողջ երկայնքով՝ Գանձակից մինչև Մուսուլմանլար-Զանգեզուր: Թշնամու բանակը Զանգեզուրի վրա գրոհում էր երեք ուղղություններով՝ Մինքենդի կողմից դեպի Գորիս, Քերլյարից (Քերլեսա) դեպի Ալի-Կուլի-Ուշագի՝ նպատակ ունենալով Կապանը կտրել Զանգեզուրից և Ջեբրայիլից: Սյունիքի քաջարի ժողովուրդն անհավասար գոտեմարտում կանգնեցրեց հակառակորդի առաջխաղացումը և մարտի 25-26-ին, անցնելով հակահարձակման, նրան հետ շպրտեց մինչև Մախուղլի և վերականգնեց կապը Ղարաբաղի հետ:

Մուսավաթական բանակի հարվածային ուժերը թուրք սպաների հրամանատարությամբ կենտրոնացել էին Աղդամ-Ասկերան-Խանքենդ-Շուշի խճուղու, իսկ արևմտյան կողմից՝ Քիրս-Տումի-Խծաբերդ ուղղություններով:

Հայկական զինված կազմավորումները նախ հարձակվեցին ռազմավարական նշանակություն ունեցող Ասկերանի, Շուշիի և Խանքենդի վրա: Մարտի 22-ին Խանքենդի ուղղությամբ գործող հայկական ուժերը գրավեցին Խոջալուն և Խանքենդը: Մարտի 23-ին ազատագրվեց Ասկերանը:

---

480 Տես Յառաջ, 9 հունվարի, 1920:

481 Տես ՅԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 21, թ. 34–35:





Հայաստանի առաջին Հանրապետության զինանշանը



Պետական դրոշը




Թղթադրամը



Հայաստանի Հանրապետության կառավարության շենքը



Արամ Մանուկյան



Ստեփան Շահումյան



Ստեփան Զորյան
(Ռոստոմ)



Հովհաննես Քաջազնունի



Ալեքսանդր Խատիսյան



Համո Օհանջանյան



Սիմոն Վրացյան



Ավետիք Սահակյան



Ավետիս Ահարոնյան



Ամենայն Հայոց
Կաթողիկոս
Գևորգ Ե Սուրենյանց



Մեծի Տանն Կիլիկիո
Կաթողիկոս
Սահակ Բ Խապայան



Մեծի Տանն Կիլիկիո
Կաթողիկոս
Գարեգին Ա Հովսեփյանց



Մայր աթոռ
Սուրբ Էջմիածին



Երևանի պետական
համալսարանի շենքը



Անդրանիկ Օզանյան



Դրաստամատ Կանայան
(Դրո)



Գարեգին Նժդեհ



Ռուբեն Տեր-Մինասյան



Թովմաս Նազարբեկյան



Մովսես Սիլիկյան



Պողոս Բեկ-Փիրումյան



Դանիել Բեկ-Փիրումյան



Քրիստափոր Արարատյան



Հայաստանի Հանրապետության զինվորական խորհուրդը (1918 թ.)



Արևելյան (Հայկական) լեգեոնի մարտիկներ (1919 թ.)



Շահան Նաթալի



Սողոմոն Թեհլերյան



Արամ Երկանյան



Միսաք Թոռլաքյան



Արշավիր Շիրակյան



Ստեփան Ծաղիկյան



Պետրոս Տեր-Պողոսյան



Արտաշես Գևորգյան



Հրաչ Փափազյան

Հայ ռազմիկներից ու աշխարհազորայիններից կրած խայտառակ պարտության վրեժն Ադրբեջանը լուծեց՝ Շուշիի ու շրջակա գյուղերի հայ խաղաղ բնակչությանը սրածության ենթարկելով: Խ. բեկ Սուլթանովի հրահանգով ադրբեջանցի զինվորները և տեղի մահմեդականները մարտի 22-ից 23-ը արյան խրախճանք կատարեցին Շուշիի հայկական թաղամասում: Ոչ ստույգ տվյալներով՝ Շուշիում զոհվեց մոտ 8 հազար հայ: Ապրիլի սկզբներին Ադրբեջանի բանակը կոտորածներ կազմակերպեց Շուշիի և Ջիվանշիրի ավելի քան 30 հայկական գյուղերում: Անխնա թալանվեցին բազմաթիվ գյուղեր:

Ադրբեջանական բանակը մարտի վերջին միաժամանակ երեք՝ Ասկերան-Շուշի խճուղու, Աղդամ-Վանք և Կարաչինար-Էրքեջ ուղղություններով անցավ նոր հարձակման: Կատաղի մարտեր ծավալվեցին Ասկերանի համար: Ապրիլի 4-ին հակառակորդը մեծ կորուստների գնով կարողացավ գրավել Ասկերանը, իսկ 7-ին՝ Խանքենդը: Նրանց առաջխաղացումը կասեցվեց Քեշիշքենդ և Սղնախ գյուղերի մոտ: Դիզակի ռազմաճակատում գործող հայկական ուժերը մի շարք մարտերում հակառակորդին ծանր պարտության մատնելուց հետո ազատագրեցին Ղարադշլաղ գյուղը և վերականգնեցին կապը Զանգեզուրի հետ:

Մի վերջին անգամ Ղարաբաղի հարցը քննարկման նյութ դարձավ 1920 թ. ապրիլի 9-ին Թիֆլիսում՝ Անդրկովկասի երեք հանրապետությունների խորհրդաժողովում: Համաղաշնության հարցի կապակցությամբ սկզբունքային քննարկումներն այդպես էլ կողմերին համաձայնության չբերեցին: Նույնը վերաբերում է սահմանների հարցին: Ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումով խորհրդաժողովը կասեցրեց աշխատանքները:

Սպառելով Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորման բոլոր հնարավորությունները՝ Հայաստանի կառավարությունը 1920 թ. ապրիլի 11-ին քննարկեց Ղարաբաղ կանոնավոր զորքեր մտցնելու հարցը: Ապրիլի 14-ին Զանգեզուրի կողմից Ղարաբաղի Վարանդա գավառ մտան Դրոյի ղեկավարած զորամասերը և 3-4 օրվա ընթացքում ամբողջ գավառը, բացի Շուշիից և Խանքենդից, ազատագրեցին թշնամուց: Ստեղծվեց բանակի ընդհանուր հրամանատարություն՝ Դրոյի գլխավորությամբ: Կազմվեց Ղարաբաղի ժամանակավոր կառավարություն, որը բանաձև ընդունեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության հետ վերամիավորելու մասին: Բանաձևը հաստատվեց արցախահայության 9-րդ համագումարի (1920 թ. ապրիլի 25-ից 29-ը) կողմից, որը, վերացված և ուժը կորցրած համարելով 7-րդ համագումարի պարտադրված որոշումը, Լեռնային Ղարաբաղը հռչակեց որպես Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս: Ղարաբաղ հասավ նաև Գ. Նժդեհը՝ Կապանի իր զորամասով, և տեղավորվեց Դիզակի շրջանում:

Հայ-ադրբեջանական հարաբերություններին նոր լարվածություն հաղորդեց ապրիլի վերջին տեղի ունեցած Ադրբեջանի խորհրդայնացումը: Վերջինիս բոլշևիկյան կառավարությունը «վիճելի» տարածքների հարցում հավատարիմ մնաց մուսավաթական իշխանությունների վարած նվաճողական քաղաքականությանը:

Ադրբեջանը խորհրդայնացնելուց հետո ռուսական կարմիր բանակի հերթական խնդիրը դարձան Ղարաբաղի ու Զանգեզուրի նվաճումը և քեմալական Թուրքիայի հետ ցամաքային կապի հաստատումը:

Ադրբեջանի ռազմահեղափոխական կոմիտեի (ՌՀԿ) ներկայացուցիչ Համիդ Սուլթանովն իր բարեկամին վստահեցնում էր, թե կարմիր զորքերը, որոնք արդեն գրավել են Եվլախը, շարժվում են դեպի Շուշի և նպատակ ունեն Ղարաբաղով միանալու քեմալական զորքերին[482]: Ղարաբաղի խորհրդայնացումն օրերի հարց էր: Ապրիլի 29-ից 30-ը կարմիր դիմակ հագած նախկին մուսավաթական Խ. բեկ Սուլթանովի նախաձեռ-

[482] Տես նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 427 (մաս II), թ. 336:

նությամբ Ղարաբաղի մի շարք վայրերում՝ Շուշիում, Կարյագինոյում, Ասկերանում և այլուր, ստեղծվեցին հեղկոմներ: Ապրիլի 29-ին կազմակերպվեց Ղարաբաղի միացյալ հեղկոմը, որի նախագահ հռչակվեց Ա. բեկ Սուլթանովը: Մինչ Հայաստանի կառավարությունն ուղիներ էր փնտրում վիճահարույց հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու համար, Ադրբեջանը ձգտում էր օր առաջ խորհրդային զորքերի միջոցով տեր դառնալու Ղարաբաղին և «վիճելի» մյուս տարածքներին:

Իրադարձությունների հորձանուտում Ադրբեջանի հին ու նոր ղեկավարները, ապավինելով Խորհրդային Ռուսաստանի ուժին, նորանոր զորամասեր ու ռազմական տեխնիկա էին մտցնում Լեռնային Ղարաբաղ:

Ղարաբաղին ու Զանգեզուրին «կարմիրների» կողմից սպառնացող վտանգի առաջն առնելու նպատակով ապրիլի 30-ին ՌՍՖՍՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինին հղված բողոքի նոտայում Հայաստանի կառավարությունը հայտնում է, որ Ադրբեջանի զորքերը շարունակում են Ղարաբաղում զանգվածաբար ոչնչացնել հայկական գյուղերն ու հայ ազգաբնակչությանը, և այդ բարբարոսություններին մասնակից են դառնում նաև ռուսական բանակի զինվորները[483]: Նույն օրը Ադրբեջանի կառավարությանը հղած հեռագրում Հայաստանի արտգործնախարար Հ. Օհանջանյանը դատապարտում է Ադրբեջանի հայաջինջ քաղաքականությունը և պահանջում Ղարաբաղից ու Զանգեզուրից դուրս բերել ադրբեջանական բոլոր զինված կազմավորումները[484]:

Չնայած դրան՝ Ղարաբաղի սահմաններ ներխուժած կարմիր բանակի զորամասերը շարունակում էին ռազմական գործողությունները հայկական զինուժի դեմ: Ավելին՝ մայիսի 1-ին Ադրբեջանի արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Մ. Հուսեյնովը Երևան ուղարկած պատասխան հեռագրով պահանջում էր հայկական զորքերից «մաքրել Ղարաբաղի ու Զանգեզուրի տարածքը»[485]:

Փոխադարձ մեղադրանքներ պարունակող բողոքի հեռագրերի հոսքը Բաքվի և Երևանի միջև շարունակվեց ևս մի քանի օր: Բաքուն չհապաղեց օգտվել հայ-ադրբեջանական հակամարտությունում Մոսկվայի կողմից Ադրբեջանի կառավարության գործողությունները խրախուսելուց:

Մայիսի 12-ին Շուշի մտավ 11-րդ կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի 281-րդ գունդը: Նույն օրը Շուշի ժամանեց Կովկասյան ճակատի ռազմական խորհրդի անդամ Գ. Օրջոնիկիձեն: Մի քանի օր անց վերադառնալով Բաքու՝ նա հեռագրեց Վ. Լենինին, Ի. Ստալինին և Գ. Չիչերինին, որ Ղարաբաղում բազմաթիվ հայկական գյուղեր մուսուլմանների կողմից հիմնովին կործանվել են[486]: Մայիսի 18-ին նույն խորհրդի լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանն իր հանձնախմբով Վարանդայի շրջանի Ղաբաբուլաղ գյուղում պաշտոնական հանդիպում ունեցավ Դրոյի հետ: Նա խորհրդային իշխանության անունից Դրոյից պահանջեց հայկական զորամասերը դուրս բերել Լեռնային Ղարաբաղի տարածքից և հետ քաշվել դեպի Զանգեզուր՝ հակառակ դեպքում սպառնալով պատերազմով:

Մեծաթիվ և լավ զինված կարմիր բանակի զինուժի հետ չբախվելու նկատառումով, ինչը ողբերգական կարող էր լինել թե՛ Հայաստանի Հանրապետության և թե՛ Ղարաբաղի համար, մայիսի 27-ին հայկական փոքրաթիվ զորամասը Դրոյի գլխավորությամբ դուրս եկավ Ղարաբաղից և վերադարձավ Գորիս:

Մայիսի 25-ին Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ արցախահայության 10-րդ հա-

483 Տե՛ս Нагорный Карабах в 1918–1923 гг., док. 303, էջ 443–444:

484 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 20:

485 Տե՛ս Нагорный Карабах в 1918–1923 гг., док. 305, էջ 445:

486 Տե՛ս նույն տեղում, վավ. 320, էջ 464–465:



մագումարը, որը Լեռնային Ղարաբաղը հռչակեց խորհրդային: Բաքուն շարունակում էր ջանքեր գործադրել իր իշխանությունն ամբողջ Ղարաբաղի վրա տարածելու համար, իսկ Հայաստանի Հանրապետությունը ձգտում էր հասնել Ռուսաստանի կողմից իր անկախության ճանաչմանը՝ ներառելով նաև Լեռնային Ղարաբաղը: Նույնիսկ «գունափոխությունը» փրկություն չբերեց Ղարաբաղին: Ըստ էության, Ադրբեջանն ու Ռուսաստանը Ղարաբաղը և «վիճելի» մյուս տարածքները նվաճելու խնդրում միակամ ու դաշնակից էին և գործում էին ձեռք ձեռքի տված:

1920 թ. հուլիսի վերջերին Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը գտնվում էին խորհրդային Ռուսաստանի զորքերի ձեռքում: Ռուսական կողմը հավաստիացնում էր, որ իր զորքերի կողմից «վիճելի» տարածքների գրավումը նպատակ ունի կանխելու անխուսափելի արյունահեղությունն ու բախումները: Խորհրդային զորքերի ներկայությունը միայն մասամբ փոխեց դրությունը, իսկ խորհրդային իշխանությունները Ղարաբաղում և Զանգեզուրում ունեին իրենց շահերը և Ադրբեջանի նկատմամբ վարում էին այդ շահերին համապատասխան քաղաքականություն:

Երբ նշված՝ 1920 թ. օգոստոսի 10-ի Թիֆլիսի հայ-ռուսական համաձայնագիրը Ադրբեջանի համար արգելք չեղավ դառնալու Ղարաբաղի բախտի տնօրենը: Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովն իր գործընկերներին վստահեցնում էր, թե աշխարհում չի լինի մարդ, որը կարողանա իրենց խանգարել՝ ազդելու «նշված մարզերի բնակչության վրա, որպեսզի նա արտահայտվի Ադրբեջանին միանալու օգտին»[487]:

Ազդելու միջոցներ, իհարկե, գտնվեցին: Այսպես՝ Ղարաբաղում բոլշևիկները զինաթափեցին ամբողջ հայությանը և այդ զենքով զինեցին տեղական երիտասարդներից կազմված կոմունիստական խմբերին: Բռնի կերպով զորահավաքի ենթարկեցին հայերին և պարտադրեցին մտնել Ադրբեջանի բանակ: Հայ զինվորական պաշտոնյաներից շատերին ձերբակալեցին: Պայքար ծավալվեց գավառի պետական բոլոր հիմնարկներում ղեկավար պաշտոններ զբաղեցրած հայերի դեմ: Հայ ազգաբնակչության նկատմամբ բռնություններին ու հալածանքներին զուգընթաց, որպես պայքարի միջոց, գործի էր դրվում կաշառքը: Ղարաբաղի հեղկոմի նախագահ Ասադ Կարաևը հուլիսի 19-ին Գորիսի հեղկոմի իր գործընկերներին ուղարկած նամակում նշում է, թե խորապես սխալ է եղել ձեր հին քաղաքականությունը, այսինքն՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը զորքով գրավելը... այսօր զորքերի փոխարեն մեր փողը հրաշքներ է գործում: Կառավարությունը որոշել է Ղարաբաղն ու Զանգեզուրը Ադրբեջանին միացնելու համար հատկացնել 200 միլիոն ռուբլի...»[488]:

1920 թ. սեպտեմբերին Հայաստանի վրա քեմալական Թուրքիայի հարձակման հետևանքով Լեռնային Ղարաբաղը բոլորովին զրկվեց Հայաստանի Հանրապետությունից օգնություն ստանալու հույսից, չնայած ազատության համար պայքարը չէր դադարեցրել:

487 ՀԱԱ, ֆ. 64, ց. 2, գ. 5, թ. 80:

488 Нагорный Карабах в 1918–1923 гг., док. 378, с. 541–542.

**Աղբյուրը՝** *«Հայոց պատմություն. նորագույն ժամանակաշրջան (1918-1945)»*, հ. IV, գիրք I, խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 191-203: